# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710


Թիւ 382
Մարտ 19, 1991

Արժանաշնորհ
Տ. Առնակ Ա. Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Թովմաս Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Թէնէֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացուած են համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 6, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 27 եւ Փետրուար 3, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Արա Պապիկեան
Ժոզէֆ Գալէմքէրեան
Ռիչըրտ Քէօրանեան
Կրէկըրի Թէնպէքճեան
Ժոան Թորիկեան
Վիրճինիա Վիքթորիա

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնուի որ Ծխական Խորհուրդի դիւանի ընտրութիւնը տեղի պէտք է ունենայ նորընտիր անդամներու վաւերացումէն ետք։

Կը շնորհաւորեմ Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթեմ որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Աղօթակից

Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան
Առաջնորդի Փոխանորդ